

Երբոր քնոյ ժամանակն եկաւ, երկու օրիորդները սենեակնին քաշուեցան. հոն լիւզիա վզնոցը, գինգերն ու ապարանջանները հանելու միջոց՝ դիտեց որ ընկերը զգեստին տակէն երկայն բան մը հանեց և խնամքով մը մէճճարոյին տակը ծածկեց, զոր ստուլի մը վրայ դրած էր. ետքը ծնկան վրայ եկած՝ ջերմեռանդութեամբ աղօթքն ըրաւ, և քիչ վերջը անկողին մտաւ: Լիւզիա հետաքրքրութենէն մղեալ՝ ստուլին մօտեցաւ, և մէճճարուն վեր առաւ. իբրև թէ գնդասեղ մը կը փնտռէր. տեսաւ երկնկեկ հին դանակ մը, որուն կոթը սատափէ և արծրթէ էր, և հնասիրաց աչքին առջև շատ յարգ կրնար ունենալ: Ան ատեն հարցուց Աղաւնին.

— Սովորութիւն կայ արդեօք հոս, որ աղջիկները զգեստնուն տակ դանակ պահեն:

— Այո, հարկ է որ ունենան, պատասխանեց հառաչանօր Աղաւնին. անզգամ մարդիկ լեցուն են:

— Կրնաս իրաւցընէ սիրտ ընել ա.

սով հարուած մը տալ: — և դանակը ձեռքն առած կը ձևացընէր զարնել, վերէն վար իջեցընելով՝ ինչպէս որ թատրոններու մէջ կ'ընեն:

— Այո, պատասխանեց Աղաւնի, անոյշ ու ներդաշնակ ձայնիւր, երբոր անձիս և բարեկամացս պաշտպանութեանն համար հարկ է: ... Բայց ասանկ չեն բռներ. աս կերպով կրնաս զքեզ վիրաւորել, երբոր թշնամիդ ետ քաշուելու ըլլայ: — Եւ անկողինն մէջ նրստելով դանակը ձեռքը, — Նայէ, ըսաւ, այսպէս կը զարնեն, վարէն վեր. այս կերպով մահացու է վերքը կ'ըսեն: Երջանիկ են այն մարդիկն որ այսպիսի զէնքերու պէտք չունին:

Ըսաւ և հառաչեց, և գլուխը բարձին տուած՝ աչքերը գոցեց:

Շարունակութիւնը գալ թերթով:

ՄԷՐԻՄԷ:

Տ Ե Ղ Ա Գ Բ Ո Ի Թ Ի Ի Ն Ք  
 Ի Փ Ո Ք Բ Ե Ի Ի Մ Ե Ծ Հ Ա Յ Ս  
 Ն Ի Կ Ի Ա

ԲԵՐԴՆ. — Բերդաքաղաքն Նիկիա հռչակաւորն 'ի հնումն և առ կայսերօք Հռովմայ և Բիւզանդացուոց, գիւղաքաղաք մի փոքրիկ է արդ գուզնաքեայ տամբք իբր հարիւր և յիսնիւք: Շինուածոց ապարանիցն ողջոյն կործանեալ և աներևութացեալ պարիսպքն և եթ անկործան կան տակաւին ահագին տարածութեամբ, սուկացեալ ընդդէմ բռնութեան ոխերիմ թշնամեաց և սաստիկ պատերազմաց. և պանչացուցանեն զտեսողս ընդ նախնեացն մեծագործութիւն: Բովանդակ բերդն կառուցեալ է 'ի դաշտավայրի, կրկնապարիսպ՝ բաց 'ի ծովակողմանէն, ներքինն բարձր և ստուար, և կից նմին են աշտարակքն ահագին թանձրութեամբ ընդ բովանդակ շրջապատ բերդին, յորոց սակաւք քառակուսի ձևով, այլն առ հասարակ բոլորչի: Շինուած պարսպացն և աշտարակացն աղիւսակերտ է, բաց 'ի միոյ կողմանէ՝ որ առ Ստամպոլ գալուստը դրամբ և ձգի 'ի ծովակողմն կոյս. և այդ

մասն պարսպիդ 'ի քառակուսի քարանց շինեալ հանդերձ աշտարակօրն, երևի նախնի հիմնարկութեանն մնացորդ. զի և յայլևայլութենէ ճարտարպետութեանն՝ յայտնի երևի ոչ սակաւ նորոգութիւնս կրեալ 'ի դարս դարս, մանաւանդ առ քրիստոնեայ կայսերօք. զի և 'ի մի յաշտարակացն երևի ցարդ նկարէն պատկեր սրբոյն Գէորգայ յորմն: Հոյակապ են և դրուճքն ամենայն որ կոչին Լէվքէ գաբուռ, սուռ, Ստաւնպօլ գաբուռսուռ և Եէնի շէնիք գաբուռսուռ. երկուստեք առաջնոյ դրանն կան բարձրաքանդակ պատկերք խորտակեալք, և առ երկրորդին ևս, ուր և պատկեր փրկչին և առաքելոցն. կրկնադրուճք են յետին երկուքն: Շրջապատ բերդին ողջոյն տեւէ ժամս չորս հանդարտաքայլ ընթացիւք: Ի կողմն Ստաւնպօլ գաբուռսուռ դրանն հարուստ մի հեռի 'ի նմանէ յաջմէ՝ 'ի ծայր միոյ յաշտարակացն երևի մնացուած հնաձև յոյն արձանագրութեան աղիւսակողմամբք յարմարեալ յորմն անդ: <sup>1</sup>

Ընդ ամենայն շրջապատ բերդին, բաց 'ի ծովակողմանէն, և ընդ միջավայր կրկին պարսպացն և ընդ միջին տարածութեամբ բերդին բաց 'ի սակաւաթիւ թաղից անդաստան գործեալ են թթենեաց, պտղատու ծառոց և այլ ևս ընդեղինաց:

ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԳԵՏՆԱՓՈՐ ՏԵՂԻԿՆ. — Ի բերդին մնացորդ նախնի շինուածոց արժանի տեսութեան և անմահ յիշատակի, որում և ձեռն թշնամի եկաց պատկառ, առ 'ի հանդէս նախնեացն մեծագործութեան և բազմահնար զգուշութեան նոցին՝ յօրինակ որոց յետ այնորիկ գալոց են ազգք, են գետնափոր տեղիքն կամ ստորերկրեայ ուղիք. որոց արտաքին ամրութիւնքն թէպէտ և քայքայեալ իցեն, այլ բուն ներքինն անկործան կայ: Եւ են դժբա ոչ շատ հեռի 'ի ծովակողման պարսպէն 'ի միում վայրի առընթեր միմեանց, որմով յիրերաց զատուցեալ. կամարաձև ունելով մուտս նոցին իբրև երեք կամ չորք մեզր լայնութեամբ. ներքին վայրն լայնարձակ և կամարակապ 'ի մեծահատոր և 'ի ստուար քարանց. 'ի միջոց վայրի կամարին քառակուսի անցք գործեալ են, ընդ որ մի դք հազիւ կարէ մտանել, և 'ի ներքս անդ է ստորերկրեայ ուղին նոյնպէս կամարապատ. այլ չէ ուրուք փորձեալ ցոր վայր ձգիցի երկայնութիւն նորա և ուր հասանիցէ: Ի հոյակապ շինուածոցդ որ հինգ են թուով, երկոցուն ևեթ կան գետնափոր ուղիք. այլքն հանդիպակաց որմովքն ևեթ սահմանին: Զարտաքին տարածութիւն տեղոյս որ 'ի փոքու սահմանի, և քան զսովորական յատակ գետնոյն փոքր մի բարձր է, ապարանս արքունեաց լինել ասեն բնակիչքն, թէպէտ և հետք մնացորդաց չերևին անդ: Ի փողոցս, 'ի հրապարակս և 'ի կիցս ճանապարհաց զիւղաքաղաքիս ցիր և ցան երևին սիւնք և վերնախարիսիւք պանչելի յօրինուածովք, և հատորք պէսպէս բարձրաքանդակ ծաղկանց և զարդուց, է որ ամբողջ և է որ մասնաւորք, ազուցեալ 'ի կաւակերտ որմունս տանց և փողոցաց. ոչ ինչ խտրեալ ընդ կաւն և ընդ պանչելի արուեստակերտ յօրինուածն:

ԵԿԵՂԵՑԻ ՅՈՒՆԱՅ. — Պատկառելի է հնութեամբ և եկեղեցին Յունաց շինեալ յամին 332 յանուն սրբոյն Դեմետրեայ. յոր բաց 'ի տախտակամած զարդուց խորանին և 'ի գմբէթէն՝ յայլն ամենայն փայլէ հնութեամբ. փոքր է ըստ տարածութեան, և 'ի մէջ նորա և արտաքոյ գերեզմանք հինք: Ի ձախակողման աւան.

1. Տես զարձանգ 'ի ստորև պատկերի պարսպաց 'Աիկոյ:

դատանն կան երկու սիւնակք առնթեր միմեանց 'ի սեաւ մաքուր քարէ . երկայն  
նութիւն միոյ 'ի նոցանէ մեղրաչափ և կէս համեմատ նրբութեամբ : Ի նմին կող-  
ման առնթեր որմոյ գաւթին կայ գերեզման վիմափոր 'ի թափանցիկ սպիտակ  
քարէ , և ճրագ թէ մուծցի 'ի ներքս , երևի թափանցանց արտաքս լոյսն , թէպէտ  
և ստուար է քարն : Պատկերն որ կայ 'ի ճակատ ներքին դրան եկեղեցւոյն յօրի-  
նեալ է 'ի միւսին քարանց ըստ այնր ժամանակի արուեստին :

Երկրորդ եկեղեցին Յունաց Այս սօփիս ասացեալն աւերակ է . որոյ արտա-  
քին որմունքն ևեթ կան . և յորմունս աւանդատանն նշմարին տակաւին նկարէն  
պատկերք :

ԺՈՂՈՎԱՏԵՂՆ ԵՅԸ ՀԱՐՅՆ . — Յանկալի յիշատակ և մնացորդ ժողովատեղոյ նի-  
կիական Հարցն՝ է անընդմիջաբար արտաքոյ պարսպին 'ի ծովակողմն կոյս , անդ  
ուր բարձրաբերձ կաղամախ ծառքն կան . ոչ այլ ինչ նշմարի 'ի տեղւոյն , բայց  
միայն քառակուսի շրջապատ որմոցն քայքայելոց , մեղրաչափ և կէս բարձրու-  
թեամբ 'ի գետնոյն 'ի վեր . և միջոց տարածութեան տեղոյն՝ որ և չէ դուզնա-  
քեայ ինչ՝ յանդաստան փոխեալ է . միայն երկուստեք 'ի կողմանցն կան մնացորդք  
քարեղէն սանդղոց . ձախակողմեան հիմն շինուածոյն երկայնեալ ձգի մինչև ցմէջ  
լճին , յորոյ եզեր շինեալ է քաղաքն :

Ի նոր շինուածոց անուանի է Ե՛լիլի միևնարե կճանման ձուլածոյ սեամբքն որ  
կան 'ի գաւթի մզկթին , մնացորդք 'ի հնոց . իսկ շուկայն և բաղանիք և որ այլն  
ևս ամենայն հասարակ և ոչ արժանի յիշատակի : Տունք Յունաց 'ի Նիկիա են քա-  
ռասնիւ չափ , այլքն առ հասարակ Տաճկաց են :

Վեց ժամաւ հեռի 'ի Նիկիոյ է Թիլզէ լեառն , ուր գտանի քար ինչ կանաչա-  
գոյն՝ յարգի առ ուսմիկն Տաճկաց , որք ասեն տէվրիչի ուրումն խստակրօնի  
ճգնել 'ի լերինն , և թքոյն 'ի քար փոխարկել . 'ի քարէ այտի ուլունս և պէսպէս  
զարդս յօրինեն :

**ՃԱՆԱՊԱՐՀ Ի ՆԻԿԻՈՅ Ի ԳԱՐԱՄՈՒՍԱԼ ԵՒ Ի ՆԻԿՈՄԻԴԻԱ**

Հեռի 'ի Նիկիոյ կէս ժամաւ է Նար գիւղ յեզր լճին , նորոգ բնակեալ 'ի Հայոց  
իրր 'ի յիսուն տանց . որոց է և նորաչէն եկեղեցի վայելուչ յանուն սրբոյ Լուսա-  
ւորչի : Բնակութիւն գեղջս եղև ճարտարութեամբ միոյ յորդոց խաչոյեանին  
Սէօլէօզեցւոյ զոր 'ի վեր անդր յիչեցաք :

Ֆուրաձըգ գիւղ բնակեալ 'ի Յունաց , երեք ժամաւ հեռի 'ի նմանէ : Է և այլ  
Նար գիւղ զոր հասարակաբար Եւրախ տէրէ կոչեն , բնակեալ 'ի Հայոց . ունի  
տունս հարիւր և նոր եկեղեցի Հրեշտակապետ կոչեցեալ :

Կեօզմերտան կէս ժամաւ հեռի 'ի նմանէ :

Ուզին Նիկիոյ մինչև ցԳարամուսալ լեռնային է , վախուտ և դժուարագնալի :

Գարամուսալ հեռի է 'ի Նիկիոյ 10 ժամ , թէպէտ և այլ կրկին ուղիք կան  
նորին , միոյն տևեալ ժամն 12 և միւսոյն 8 : Եւ է աւան փոքր առ ծովեզեր խորշին  
Նիկոմիդեաց , յոր աստի ստէպ երթևեկութիւն լինի , մանաւանդ որոց ոչն կամի-

ցին զողջոյն ուղին ցամաքաւ առնել մինչև ցնիկովիդիա : Բնակիչք սորա են Տա-  
ճիկք և Յոյնք . ունի շուկայ փոքր . մզկիթքն և եկեղեցին ոչ ինչ նշանաւոր :

### Ն Ի Կ Ո Մ Ի Դ Ի Ա

Համբաւաւորն 'ի քաղաքս Բիւթանացոց Նիկովիդիա , ուր բազում անցք ան-  
ցին առ Հոովմայեցւոյք և առ Յունք , անկեալ է յոյժ 'ի նախնի փառացն , և 'ի շա-  
հուց վաճառականութեան , յետ բարգաւաճանաց Զմիւռնիոյ , և յաճախելոյ շոգե-  
նաւաց 'ի Սեաւ ծով . զի վաճառականութիւն նորա մեծաւ մասամբ յերթևեկու-  
թենէ կարաւանացն էր , ոչ ինչ պողաբերեալ յինքենէ և ոչ արհեստակերտեալ  
ձեռագործս ինչ : Արդ քաղաքն Նիկովիդացոց կառուցեալ կայ 'ի ծայր հիւսիսա-  
կան խորշին Մարմաուայի , որ երկայնեալ ձգի յարևմտից յարևելս զուզահեռա-  
կան խորշին Կէմէլէյիկի և լճին Նիկիոյ : Դիրք քաղաքին 'ի գագաթանէ լեռին սկը-  
սեալ յանդի մինչև ցծովեզրն . և երեսք նորա հային 'ի հարաւ . ոչ ինչ օգնեալ  
'ի հիւսիսային հողմոց՝ որ զովացուցիչ է յամարան և աւողջարար . նմին իրի սօթ  
սաստիկ լինի և հիւանդութիւնք ախտից :

Ի նախնի շինուածոց յաւուրց անտի հեթանոսութեան՝ որ ինչ կան ցրիւ , ա-  
ւերակ են իսպառ . և հեռի 'ի քաղաքէն . այլ 'ի մէջ քաղաքին յաւուրց քրիստո-  
նէութեան նշխար ցանկալի մնացեալ է աւերակ եկեղեցատեղոյն Երկուց Բիւ-  
րուց , որ արդ մասամբ գերեզմանատուն է Հայոց և մասամբ անդաստան գործեալ :  
Երեկն տակաւին 'ի նմա աւերակք խորանաձև տեղեաց , և մօտ առ նոսա այլ շի-  
նուած մի փոքր գմբէթաւոր , 'ի չորից կողմանց բաց և կամարաձև մտիւք . այլ  
այժմ գագաթն նորա հաւասար է գետնոյն : Մասն որմոյ եկեղեցոյն թուի լինել  
որ մնացեալ է 'ի կողմանէ չրջապատի գերեզմանատանն . և անտի և 'ի տեղոյ  
խորանացն՝ մարթի իմաստասիրել զմեծ տարածութիւն նախնի եկեղեցոյն որ  
տանէր զբիւրս :

Փոքր մի հեռի 'ի նմանէ է վկայարանն սրբոյն Պանդալէոնի 'ի ձեռս Յունաց :  
Իսկ վկայարանն Երմոգիւնեայ քահանայի մօտ է 'ի թաղն Հայոց , որպէս և աշա-  
կերտի նորա յիշատակելոյ 'ի Յայսմաւուրս . և են արդ 'ի ձեռս Տաճկաց . գերեզ-  
մանք նոցա և շինուածք տեղոյն անզարդք են և տաճկաձև :

Ի Նիկովիդիա տունք Տաճկաց հաշուին աւելի քան զերիս հազարս . Հայոց  
350 , Յունաց 480 , իսկ Հրէից սակաւք : Եկեղեցին Հայոց Աստուածածին կոչե-  
ցեալ նորաշէն և գեղեցիկ է յոյժ քան զամենայն նորաշէն եկեղեցիս կողմանց Բիւ-  
թանիոյ . և է գմբէթաւոր , այլ արտաքուստ չերևի գմբէթն : Գեղեցիկ է նոյնպէս և  
մկրտարանն որ կայ յաջակողմեան աւանդատանն , բովանդակ կճապատ և բարձ-  
րաբանդակ պատկերք և զարդք ըստ տանելոյ ճարտարութեան արևելեան գեղա-  
րուեստից : Առ եկեղեցեաւն հիւրանոց կամ թէ ասել եկեղեցատուն . և 'ի հիւսի-  
սոյ եկեղեցոյն՝ դպրոց մեծ և բարձր . որպէս և եկեղեցին է 'ի բարձրահայեաց  
վայրի : Մարաստուն քաղաքին առ ծովեզրերն է . ունի և նաւակառոյց փոքր :  
Մզկիթք , և մանաւանդ իջեվանք յոյժ հասարակ են , որպէս և շուկայն բովանդակ ,  
թէպէտ և մեծատարած :

Հանդէպ քաղաքին առ ծովեզերքն միով ժամաւ հեռի է Ֆէսխաւնէ շինեալ  
յաւուրս սուղան Մահմուտայ, և գործարան չուխայի առ որդւով նորա :  
Անուանի է 'ի վաճառս Նիկոմիդիոյ քահիւն Ռէրվասի կոչեցեալ քաղցուենի :

### Ա Ր Մ Ա Շ

Յարեելից հիւսիսոյ կայ Նիկոմիդիոյ և հեռի անտի վեց ժամաւ գիւղ փոքր,  
բնակեալ 'ի 50 տանց Հայոց . և ծանօթ է ամենեցուն 'ի պատճառս հոչակաւոր  
մենաստանին, որ և ուխտատեղի է, և անպակաս է երթեւեկն, մանաւանդ 'ի  
տօնի վերացման խաչին : Մենաստանն ողջոյն կառուցեալ է 'ի վերայ բլրի . և ար-  
տաքոյ նորա և 'ի ներքս պարտէզք զուարճալիք : Բովանդակ շինուածն որ և կրրկ-  
նայարկ է, յարեելից յարեմուտս ունի ընդ երկայնն 135 մեղր և ընդ լայն 92 :  
Ուխտաւորաց բնակարանքն միջնորմով և միջնադրամբք զատուցեալ են 'ի բնա-  
կարանէ միաբանից : Եկեղեցին հիմնեալ յանուն Զարխարիան Աստուածաճնի  
ահեղ է մեծութեամբ, պայծառ և հոյակապ, թէ և ձեղուն նորա և սիւնքն և վեր-  
նատունն ուխտաւոր կանանց փայտակերտք : Երեք են խորանքն, և խաչավառ  
զարդք նոցա թէ և նոյնպէս փայտակերտք, այլ գեղադրուագք և ոսկէզօծք, որովք  
ահեղ մեծութիւն եկեղեցւոյն առաւել ևս փայլէ : Ի գաւթին 'ի ձախակողմն ե-  
գեալ կայ պատկեր Աստուածածնի հրաշագործ, որ յառաջագոյն յաւագ խորա-  
նին եղեալ էր, և ապա աստ փոխադրեցին սակա դիւրութեան ուխտաւորաց որ  
անմեկնելիք են հանապազ 'ի տեղւոյն, ուր և ածեն զախտաւոր հիւանդս . և  
հաւատովք մերձեցողացն լինի բժշկութիւն . ձև և յօրինուած պատկերին հասա-  
րակ է և անարուեստ և ոչ իսկ հին . և փոխանակ նորա եղեալ են յաւագ խորանն  
այլ պատկեր Աստուածածնի ճարտարարուեստ գործ խոտլացի նկարչի : Առ հրա-  
շագործ պատկերան մօտ յորմն թաղեալ կայ Պօլոս եպիսկոպոս կեսարացի մե-  
ծահամբաւ առաջնորդ Պրուսայի : Զամանէ բազում գործք արութեան պատմին,  
որովք երեւելի հանդիսացաւ 'ի կենդանութեան իւրում, յորժամ խստութիւն բռու-  
նաւորաց տիրեալ էր կողմանցն . յանընկճելի բարուց նորա և յաներկիւղ համար-  
ձակութենէն և 'ի վեհանձն և պատկառելի դիմաց նորա չանկանէր բան մի 'ի գե-  
տին առաջի կուսակալաց . որ և վարուցն ևս խստակրօնութեամբ ակնածելի ա-  
րար զանձն առաջի ազգին իւրոյ : Սորա առաջնորդ կացեալ Պրուսայի, միացոյց  
'ի նոյն և զառաջնորդութիւն Նիկոմիդիոյ որ է թեմ Արմաշու . եզ 'ի մտի վերըս-  
տին շինել զմենաստանն հին և փոքր, ոչ 'ի գիւղն Արմաշ, այլ 'ի Նիկոմիդիա  
յաւերակի անդ Երկուց բիւրուց . սակայն զմտաւ ածեալ ապա զպէսպէս դժուա-  
րութիւնսն որոց մարթ էր ծագել 'ի քաղաքին յերեսաց քաղաքապետաց ըստ  
այնր դառնութեան ժամանակին, լաւ համարեցաւ զառաջին տեղին ընտրել . թէ-  
պէտ և նեղութիւն բազում կրեաց յայլազգեաց, սակայն յաղթեալ ամենայնի  
հիմն արկ եկեղեցւոյն և աւարտեաց ամենայն մասամբն որպէս ինչ ցարդ երևի .  
այլ չև ձեռն արկեալ 'ի շինութիւն մենաստանին վախճանեցաւ . և ելից զթերին  
յաջորդ նորա Ստեփան արքեպիսկոպոս Աղաւնի յորջորջեալ, որ կառոյց զբովան-  
դակ մենաստանն բաց յեկեղեցւոյն :

վիճակ մենաստանիս մեծ էր յառաջագոյն, այլ արդ 'ի փոքու սահմանի .  
 35 գիւղք են թեմ' նորա հանդերձ նիկոմիդեաւ . և են գիւղքդ այդոքիկ մեծաւ  
 մասամբ 'ի շրջակայս լծին նիկիոյ : Յամին 1843 դպրոց 'ի մենաստանին հաստա-  
 տեցին , յորում ժողովեալ զմանկտի թեմի իւրեանց կրթեն յուսումն , և 'ի դաս-  
 տիարակութիւն եկեղեցական վիճակի : Միաբանքն ամենայն տանիւ չափ , բա-  
 րեկրօնք և բարեհամբոյրք , հիւրամեծարք և սիրելիք , փոյթ մեծ ունին զարգա-  
 նալոյ ուսմանց և բարեկրթութեան , հրահանգեալ այնու և զմանկտին , յորոց ա-  
 ուքին յայլ և այլ գիւղս 'ի դաստիարակ դպրոցաց նոցին . զի և յամենեսին 'ի նոսա  
 են վարժոցք մանկանց . և հեղինակ այդր ամենայնի է Պօղոս եպիսկոպոս թաք-  
 թաքեան պրուսացի , փոխանորդ նորին Ստեփան վարդապետի : Զառաջնոյ շինու-  
 թենէ մենաստանին յիշատակ լինի 'ի ձեռագիր մաշտոցի իրիք անդ այսպէս . . .  
 « Ազգս մերային որ եկեալ բնակեալ 'ի գաւառս նիկոմիդացոց 'ի սահմանս Ար-  
 » մաշ կոչեցեալ վանիցն սուրբ Աստուածածնի 'ի գիւղս որ Ղըլլայ յորջորջի , չև ևս  
 » էին շինեալ յարկս աղօթից և ժամատունս : Իսկ 'ի յետին ժամանակիս յետ բա-  
 » զում տարոյ՝ որ էր թուականն ՌՃԹ (1660) 'ի հայրապետութեան տեառն Յա-  
 » կոբայ որ 'ի սուրբ Էջմիածին , և յառաջնորդութեան սուրբ Երուսաղեմի տեառն  
 » Աստուածատրոյ վարդապետի , և 'ի պատրիարզութեան տեառն Մարտիրոսի  
 » նորին աշակերտի . . . մինն 'ի նոցանէ Խասկալցի Ղումրին . . . ես . . . Երեմիաս . .  
 » եկաք 'ի նաւակատիս եկեղեցոյս և 'ի պատճառս ուխտի սուրբ վանից տիրա-  
 » մօրն Աստուածածնի , և զթերին լցաք . . . :

Խասկալ , գիւղ հայոց իբր 'ի 50 տանց , միով ժամաւ հեռի յԱրմաշայ . զա-  
 նուն գեղջս յիշատակէ և այլ ձեռագիր մաշտոց որ 'ի նմին նորաչէն եկեղեցոյ՞  
 գեղջն . » ՌԾԲ (1609) 'ի մայրաքաղաքն Ստամպոլ 'ի դուռն կոմրուկու սուրբ  
 » նիկողայոսին . առաջնորդութեան կեսարացի Գրիգոր քաջ բարունապետին .  
 » թագաւորութեանն սուլթան Ահմատին . Աստուած զիւր սուրն կտրուկ անէ : Զե-  
 » ուամբ անարժան թոխաթցի Միքայէլին 'ի վայելումն Խասկալցի տէր Միքայէ-  
 » լին . . . Արդ գրեցաւ սա 'ի դառն և 'ի զիժար ժամանակիս , զի խեղճ քրիստո-  
 » նեայքն ճալալոց համար փախեան և եկին 'ի Ստամպոլ . և զոքս այլ կու հալա-  
 » ծեն 'ի Ստամպոլու :

Մ Ի Զ Ա Տ Ք

Ե

Բնագործուն առաջնորդ միջառուց :

Գարնան եղանակին երևոյթ մ" է :  
 Յորեկ ատեն կը տեսնես որ յանկարծ  
 ամպերն հորիզոնին վրայէն կը սկսին  
 ելլել , սահիլ , բարձրանալ , հսկայա-  
 կերպ գիգուիլ : Քիչ ժամանակի մէջ  
 երկինքը կը պատեն , արևը կը ծածկեն :

Իրենց առջևէն նախ առերևոյթ մեռեալ  
 հանդարտութիւն մը , ապա թեթև քա-  
 մի մը կը քալցընեն , ազդարար գալու-  
 փոթորկին : Մառոց տերևներն կը սկսին  
 շարժիլ , ծփալ , թեթև խշրտոց մը հա-  
 նել . կարծես թէ կը ծիծաղին . կարծես  
 թէ կ'ուրախանան . կ'արծես թէ կ'անձ-  
 կան զովութեան . ու հրաւէր կը կար-  
 դան անձրևին . որ ցորեկուան խղղուկ  
 ջերմութենէն ետքը՝ իրենց լկեալ , թու-  
 լացեալ անդամներն պիտոր զովացընէ :